Թողարկման 18-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2011

նոյեմբեր

թիվ 11 (159)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Գոլդ Չենս» ՍՊԸ-ի գրավատան լիցենզիայի գործողությունը դադարեցնելու, ինչպես նաև «Սփին Թոփ» ՍՊԸ-ի արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին՝ «Ինտելէքսպրես» և «Ռիա Մանի Թրենսֆըր», «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ին «Ռիա Մանի Թրենսֆըր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի «Կոմիտաս 1» մասնաճյուղը գրանցելու, ինչպես նաև 3 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 258-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության արծաթե ներդրումային դրամների թողարկման ծրագրով նախատեսված «Նոյյան տապան» 1/4 և 1/2 տրոյան ունցիա քաշով արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 269-Ն որոշումը «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին»

19 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 292Ա):

- ***Դադարեցվել է*** «Գոլդ Չենս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիայի գործողությունը (որոշում թիվ 296Ա):

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Սփին Թոփ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 314Ա):

- ***«Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 315Ա):

- ***«Ռիա Մանի Թրենսֆըր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» և «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 319Ա, 320Ա):

- ***Գրանցվել է*** «էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության «Կոմիտաս 1» մասնաճյուղը (որոշում թիվ 1/1235Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1238Ա, 1/1263Ա, 1/1321Ա):

Հայաստանի Հանրապետության արծաթե ներդրումային դրամների թողարկման ծրագրով նախատեսված «Նոյյան տապան» 1/4 և 1/2 տրոյան ունցիա քաշով արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2011 թվականի նոյեմբերի 14-ից շրջանառության մեջ դնել «Նոյյան տապան» 1/4 և 1/2 տրոյան ունցիա քաշով արծաթե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունը, որը ներդրումային դրամների ուրվագծերի հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
14 հոկտեմբերի 2011 թ., N 258-Ն

Հավելված

Հ ա ս տ ա տ վ ա ծ է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հոկտեմբերի 11-ի
թիվ 258-Ն որոշմամբ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2011»: Աջ կողմում տեղադրված են «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Դրամի ուրվագծերի հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

Դրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. հոկտեմբերի 11-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 1.11.2011 թ. (ՀՀԳՏ N26 (409)[1], 18.11.2011):

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա (7,8 գրամ)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,0 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

1.1. «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





2. «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2011»: Աջ կողմում տեղադրված են «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Դրամի ուրվագծերի հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Դրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա (15,5 գրամ)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,2 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

2.1. «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*«Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին**[*]*

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների համար ընդհանուր կապիտալի և իրացվելիության նորմատիվներ սահմանելու պահանջը, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար դրամական միջոցներ կամ արժեթղթեր դեպոնացնելու կամ անվերադարձելի բանկային երաշխիք ներկայացնելու պահանջը,

Նպատակ ունենալով կարգավորելու վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը, դրանց համար սահմանվող տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և սահմանաչափերը,

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, 72-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. հոկտեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.11.2011 թ. (ՀՀԳՏ N26 (409)[1], 18.11.2011):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի ««Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը հաստատելու մասին» թիվ 240-Ն որոշմամբ հաստատված «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի 15-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի ««էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/1-ը հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/1-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Դեպոնացրել է.

ա) 2011 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի ապրիլի 1-ը՝ 20 միլիոն ՀՀ դրամ կամ ՀՀ դրամով արտահայտված արժեթղթեր, կամ ներկայացրել է 20 միլիոն ՀՀ դրամի անվերադարձելի բանկային երաշխիք, որոնք հանդիսանում են էլեկտրոնային փող օգտագործողների նկատմամբ էլեկտրոնային փող թողարկողի ունեցած պարտավորությունների մարումը երաշխավորող միջոց: Դեպոնացված միջոցները կարող են օգտագործվել Կանոնակարգ 17/02-ով սահմանված դեպքերում և կարգով:

բ) 2012 թվականի ապրիլի 1-ից վճարահաշվարկային կազմակերպության դեպոնացվող միջոցների պահանջի առկայությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, իսկ դեպոնացվող միջոցների դեպոնացման պայմանները՝ Կանոնակարգ 17/02-ով սահմանված կարգով:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 հոկտեմբերի 2011 թ., N 269-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հոկտեմբերի 14-ի
թիվ 269-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 17/02

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը (այսուհետ՝ Կանոնակարգ)՝ համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների (այսուհետ՝ վճարահաշվարկային կազմակերպություն) գործունեությունը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և սահմանաչափերը:

ԳԼՈՒԽ 2. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանում է հետևյալ տնտեսական նորմատիվները.

1) ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ,

2) իրացվելիության տնտեսական նորմատիվ՝ վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը:

3. Վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվը (Ն1 նորմատիվ) սահմանվում է.

1) 2011 թվականի հոկտեմբերի 1-ից՝ 30 մլն (երեսուն միլիոն) ՀՀ դրամ,

2) 2012 թվականի ապրիլի 1-ից՝ 70 մլն (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ,

3) 2012 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ և դրանից հետո՝ գործող վճարահաշվարկային կազմակերպությունների և նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպությունների համար՝ 100 մլն (հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

4. Վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն2 նորմատիվ) սահմանվում է 100 տոկոս՝ մինչև 100 մլն (հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարի ցպահանջ պարտավորությունների դեպքում, իսկ 100 մլն (հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարը գերազանցող ցպահանջ պարտավորությունների դեպքում՝ 100 մլն (հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ գումարած 100 մլն (հարյուր միլիոն) ՀՀ դրամը գերազանցող մասի 70 տոկոսը:

5. Նոր ստեղծվող, ինչպես նաև գործող վճարահաշվարկային կազմակերպությունների համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը կարող է համալրվել բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերից մեկում բացված հաշվարկային հաշվի (հաշիվների) վրա առկա դրամական միջոցներով:

ԳԼՈՒԽ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

6. Վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափը՝ Ն1 տնտեսական նորմատիվը, հաշվարկվում է ամսական, իսկ իրացվելիության՝ Ն2 տնտեսական նորմատիվը՝ օրական կտրվածքով:

7. Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է սույն Կանոնակարգի 3-րդ կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված ժամանակացույցի առաջին ամսաթվերի դրությամբ, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով (ամսվա ընթացքում ընդհանուր կապիտալի օրական մեծությունների հանրագումարը հարաբերած ամսվա օրերի թվին) ապահովել ընդհանուր կապիտալի նվազագույն չափը:

8. Վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալը նրա հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է: Ընդ որում, տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի առավելագույնը 50 տոկոսի չափով:

9. Հիմնական կապիտալը սույն կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված տարրերի հանրագումարն է: Հիմնական կապիտալի տարրերը հետևյալն են.

1) կանոնադրական կապիտալ՝ բաղկացած արտոնյալ և սովորական բաժնետոմսերից, այդ թվում՝ բաժնետոմսերի հավելավճարներից: Ընդ որում,

   ա. եթե վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կամ կանոնադրական կապիտալի մի մասը համալրվել է նյութական ակտիվներով, ապա կանոնադրական կապիտալի՝ նյութական ակտիվներով համալրված մասն ընդգրկվում է հիմնական կապիտալի հաշվարկում, բայց ոչ ավելի քան սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվի 25%-ը,

   բ. եթե վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կամ կանոնադրական կապիտալի մի մասը համալրվել է ոչ նյութական ակտիվներով, ապա կանոնադրական կապիտալի՝ ոչ նյութական ակտիվներով համալրված մասը ընդգրկվում է հիմնական կապիտալի

հաշվարկում, բայց ոչ ավելի քան սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվի 25%-ը,

2) պահուստային ֆոնդ (առկայության դեպքում),

3) չբաշխված շահույթ (եկամուտների պահուստներ): Ընդ որում, վճարահաշվարկային կազմակերպության չբաշխված շահույթն ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառվում է վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի առավելագույնը 150 տոկոսի չափով:

10. Լրացուցիչ կապիտալը բաղկացած է.

1) վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստից, որի արժեքը հավասար է վերագնահատման պահուստի հաշվեկշռային մեծության և վճարահաշվարկային կազմակերպության հիմնական կապիտալի հաշվեկշռային արժեքի 25 տոկոսի ու վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների արժեքի (նյութական ակտիվի սկզբնական արժեքի և կապիտալ ներդրումների հանրագումար՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով) տարբերության գումարներից նվազագույնին: Եթե նշված տարբերությունը բացասական մեծություն է, ապա վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստը չի ներառվում լրացուցիչ կապիտալի հաշվարկում: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$ՎՊ=\min [ՎՊ_{հ}, ՀԿ*0.25-(ՆԱ_{սպ}+ՆԱ_{կն}-ՆԱ_{սպ}-ՆԱ_{սբ}-ՆԱ_{վգ})],$$

եթե $[ՀԿ*0.25-(ՆԱ_{սպ}+ՆԱ_{կն}-ՆԱ_{սպ}-ՆԱ_{սբ}-ՆԱ_{վգ})]\geq 0$ *և*

$$ՎՊ=0, \text{ եթե } [ՀԿ*0.25-(ՆԱ_{սկ}+ՆԱ_{կն}-ՆԱ_{սպ}-ՆԱ_{սբ}-ՆԱ_{վգ})]<0,$$

որտեղ՝

ՎՊ - լրացուցիչ կապիտալի հաշվարկում ներառվող՝ վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ է,

ՎՊՀ - վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստի հաշվեկշռային մեծությունն է,

ՀԿ - վճարահաշվարկային կազմակերպության հիմնական կապիտալի հաշվեկշռային արժեքն է,

$ՆԱ_{սկ}$ - վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող ու վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների սկզբնական արժեքն է,

$ՆԱ_{կն}$ - վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող ու վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների կապիտալ ներդրումների արժեքն է,

$ՆԱ_{սպ}$ - վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող ու վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների սկզբնական արժեքի և կապիտալ ներդրումների գծով կատարված ամորտիզացիոն հատկացումներն են,

$ՆԱ_{սբ}$ - վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող ու վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների սկզբնական արժեքի և կապիտալ ներդրումների արժեզրկումից կորուստներն են,

$ՆԱ_{վգ}$ - վճարահաշվարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող ու վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների սկզբնական արժեքի և կապիտալ ներդրումների վերագնահատումից կորուստներն են:

2) հաշվեկշռի միավորման (կոնսոլիդացիայի) ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստից,

3) այլ պահուստներից,

4) վճարահաշվարկային կազմակերպության կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններից: Ընդ որում, վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառման առումով երկարաժամկետ ստորադաս փոխառություններն ունեն առաջնահերթություն լրացուցիչ կապիտալի այլ տարրերի նկատմամբ: Ընդ որում, ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, սկսած դրանց մարման ժամկետի սկզբին նախորդող հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ տարիների հունվարի 1-ից, լրացուցիչ կապիտալի հաշվարկից պետք է նվազեցվեն դրանց սկզբնական ընդհանուր գումարի 20 տոկոսի չափով:

11. Լրացուցիչ կապիտալի հաշվարկում չեն ընդգրկվում վճարահաշվարկային գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստները: Ընդ որում, սույն Կանոնակարգի իմաստով՝ վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվներ են այն ակտիվները, որոնք վճարահաշվարկային կազմակերպության կողմից օգտագործվում են վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու համար: Ընդ որում, վճարահաշվարկային գործունեության համար օգտագործվող սեփական շենքեր և շինություններ (անշարժ գույք) են համարվում այն նյութական ակտիվները, որտեղ վճարահաշվարկային կազմակերպությունը և նրա մասնաճյուղերը մատուցում են վճարահաշվարկային ծառայություններ:

12. Սույն Կանոնակարգի իմաստով երկարաժամկետ ստորադաս փոխառություն է համարվում այն փոխառությունը, որի գծով առկա են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

1) փոխառությունը տրամադրվել է հինգ տարուց ոչ պակաս ժամկետով,
2) փոխառությունը ժամկետից շուտ մարման ենթակա չէ, բացառությամբ ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի,
3) փոխառությունն ամբողջությամբ վճարված է,
4) փոխառությունը չի տրամադրվել փոխառուի նկատմամբ որոշակի պարտավորության կամ պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, կամ որպես դրանք ապահովելու միջոց,
5) փոխառությունը ենթակա չէ մարման, եթե փոխառության գումարի և/կամ դրա տոկոսների մարումը վճարման օրվա դրությամբ կհանգեցնի վճարահաշվարկային կազմակերպության համար սահմանվող տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը:

13. Վճարահաշվարկային կազմակերպության բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (իրացվելիության տնտեսական նորմատիվը) հաշվարկվում է՝

$$Ն2 = \frac{Ա_{բի}}{Պ_{ցպ}}$$ բանաձևով,

որտեղ՝

$$Աբի = \frac{(Ա_{բի1}+Ա_{բի2}+...+Ա_{բիՆ})}{Ն},$$

որտեղ՝

$Ա_{բի1}$, $Ա_{բի2}$, ..., $Ա_{բիՆ}$ - վճարահաշվարկային կազմակերպության բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

$Պ_{ցպ}$ - միջին օրական հաշվարկով ցպահանջ պարտավորություններն են ամսվա ընթացքում, որը որոշվում է.

$$Պ_{ցպ} = \frac{(Պ_{ցպ\,1}+ Պ_{ցպ\,2}+...+ Պ_{ցպ\,Ն})}{Ն}$$ բանաձևով,

որտեղ՝

$Պ_{ցպ\ 1}$, $Պ_{ցպ2}$, ..., $Պ_{ցպ\ Ն}$ - վճարահաշվարկային կազմակերպության ցպահանջ պարտավորություններն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է:

14. Ցպահանջ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված ցպահանջ և մարման սահմանված ժամկետ չունեցող տոկոսները), այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունները: Ընդ որում, սույն Կանոնակարգի իմաստով՝ ժամկետանց են այն պարտավորությունները, որոնք, բացառությամբ դատարանի կամ արբիտրաժային դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում: Դատարանի կամ արբիտրաժային դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները համարվում են ցպահանջ:

15. Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվում են ստորև թվարկված այն ակտիվները (առանց այդ ակտիվների (բացառությամբ՝ սույն կետի «4-6» ենթակետերում նշված ակտիվների) գծով հաշվեգրված տոկոսների), որոնց համար չկա դրանց տնօրինումը սահմանափակող որևէ պայման: Բարձր իրացվելի ակտիվներում չեն ընդգրկվում գրավադրված արժեթղթերը:

1) կանխիկ դրամական միջոցներ (ներառյալ՝ ճանապարհին գտնվող և վճարային տերմինալներում գտնվող դրամական միջոցները), կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր: Ընդ որում, կանխիկ դրամական միջոցները և կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում պետք է կազմեն բարձր իրացվելի ակտիվների ընդ-հանուր գումարի առնվազն 30 տոկոսը,
2) ցպահանջ ավանդներ,
3) բանկային ոսկի, ներառյալ՝ ճանապարհին գտնվող բանկային ոսկին,
4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակներ, որոնց մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է, և որոնք ենթակա են պարտադիր վճարման Կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր և Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
5) վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
6) ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում հաշվարկային հաշիվներ:

ԳԼՈՒԽ 4. ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՊՈՆԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԱՐԺԵԹՂԹԵՐԻ, ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

16. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար սահմանել դրամական միջոցներ կամ արժեթղթեր դեպոնացնելու կամ անվերադարձելի բանկային երաշխիք ներկայացնելու պահանջ:

17. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից որպես դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարումը երաշխավորող միջոց (այսուհետ՝ երաշխավորող միջոց) կարող են հանդիսանալ՝

1) դեպոնացված դրամական միջոցները (փող),
2) դեպոնացված արժեթղթերը,
3) անվերադարձելի (անհետկանչելի) բանկային երաշխիքը:

18. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է օգտագործել սույն Կանոնակարգի 17-րդ կետի «1-3» ենթակետերում նշված միջոցներից ցանկացածը, ինչպես նաև կիրառել մի քանի միջոցներ միաժամանակ:

19. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է փոխարինել իր կողմից կիրառվող երաշխավորող միջոցը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Կենտրոնական բանկին:

20. 17-րդ կետի «1-3» ենթակետերում նշված միջոցները չեն կարող օտարվել, գրավադրվել կամ այլ կերպ օգտագործվել դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության ընթացիկ գործունեության ժամանակ:

21. Երաշխավորող միջոցները կարող են օգտագործվել՝ բացառապես Կենտրոնական բանկի կողմից սույն Կանոնակարգի 8-րդ գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5. ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՊՈՆԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

22. Դրամական միջոցների դեպոնացումն իրականացվում է միայն ՀՀ դրամով:

23. Դրամական միջոցների դեպոնացումն իրականացվում է ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերից որևէ մեկում դեպոնացման համար բացված բանկային հաշիվը դրամական միջոցներով համալրելու միջոցով՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող և տվյալ բանկի միջև կնքված բանկային հաշվի սպասարկման պայմանագրի հիման վրա:

24. Բանկային հաշվի սպասարկման պայմանագրում պետք է հստակ սահմանված լինեն սպասարկման հետևյալ պայմանները՝

1) հաշվում առկա դրամական միջոցները հանդիսանում են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորման միջոց, որը չի կարող գրավադրվել կամ օգտագործվել դրամա-

կան (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության ընթացիկ տնտեսական գործունեության ժամանակ,

2) հաշիվը վարվում է ՀՀ դրամով,

3) հաշվի վրա միջոցների մուտքագրման սահմանափակումներ չկան,

4) հաշվից ելքերը կարող են կատարվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գրավոր կարգադրությամբ միայն Կենտրոնական բանկի թույլտվության առկայության դեպքում, որը կարող է դրվել կարգադրության վրա կամ ներկայացվել Կենտրոնական բանկի կողմից վավերացված առանձին նամակով,

5) հաշիվը չի կարող փակվել առանց Կենտրոնական բանկի թույլտվության,

6) դեպոնացված միջոցների բանկային հաշիվը վարող բանկը չի կարող տվյալ հաշվից մարել վճարահաշվարկային կազմակերպության՝ իր կամ այլ անձանց նկատմամբ եղած պարտավորությունները:

25. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դեպոնացման համար բացված բանկային հաշվի պայմանագրի պատճենը և փաստացի դեպոնացումը վկայող տեղեկանք՝ համաձայն սույն Կանոնակարգի Հավելված 1-ի:

26. Դեպոնացման ենթակա գումարի մեծության փոփոխման վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ Կենտրոնական բանկը տեղեկացնում է այդ մասին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը:

ԳԼՈՒԽ 6. ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՊՈՆԱՑՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

27. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը, որպես երաշխավորող միջոց, կարող է դեպոնացնել միայն Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կողմից թողարկված արժեթղթեր:

28. Դեպոնացվող արժեթղթերի մեծությունը հաշվարկվում է արժեթղթերի ընթացիկ (շուկայական) արժեքով:

29. Սույն Կանոնակարգի 27-րդ կետով սահմանված արժեթղթերի դեպոնացումն իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիլեր հանդիսացող Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկի մոտ բացված հատուկ դեպո հաշվի միջոցով՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության և տվյալ բանկի միջև կնքված դեպո հաշվի պայմանագրի հիման վրա:

30. Դեպո հաշվի պայմանագրում պետք է հստակ սահմանված լինեն հետևյալ պայմանները՝

1) դեպո հաշվում առկա արժեթղթերը հանդիսանում են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորման միջոց և չեն կարող օտարվել, գրավադրվել կամ այլ կերպ օգտագործվել վճարահաշվարկային կազմակերպության ընթացիկ գործունեության ժամանակ,

2) դեպո հաշվի վրա արժեթղթերի մուտքագրման սահմանափակումներ չկան,

3) դեպո հաշվից արժեթղթերի ելքագրում (բացառությամբ արժեթղթերի մարման) կարող է իրականացվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գրավոր կարգադրությամբ միայն Կենտրոնական բանկի թույլտվության առկայության դեպքում, որը կարող է ներկայացվել Կենտրոնական բանկի կողմից վավերացված առանձին նամակով կամ ելքի կարգադրության վրա՝ Կենտրոնական բանկի կողմից թույլտվության հատուկ վավերացմամբ:

4) դեպո հաշվում առկա արժեթղթերը կարող են փոխարինվել նույն ընթացիկ (շուկայական) արժեքին համարժեք՝ սույն Կանոնակարգով սահմանված այլ արժեթղթերով՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից նախօրոք մուտքագրելով փոխարինող արժեթղթերը դեպո հաշվի վրա, այնուհետև ներկայացնելով փոխարինվող արժեթղթերի ելքագրման կարգադրություն (արժեթղթերի փոխարինման դեպքում Կենտրոնական բանկի թույլտվությունը չի պահանջվում). դեպո հաշիվը չի կարող փակվել առանց Կենտրոնական բանկի թույլտվության,

5) դեպոնացված արժեթղթերի դեպո հաշիվը վարող բանկը չի կարող տվյալ հաշվից մարել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ իր կամ այլ անձանց նկատմամբ եղած պարտավորությունները,

6) դեպոնացված արժեթղթերը կարող են օգտագործվել բացառապես Կենտրոնական բանկի կողմից սույն Կանոնակարգի 6-րդ գլխով սահմանված կարգով,

7) դեպոնացված արժեթղթերի արժեկտրոնային եկամուտները կարող են ազատ տնօրինվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից,

8) դեպոնացված արժեթղթերի մարման դեպքում մարման արդյունքում ստացված դրամական միջոցները դեպոնացնող բանկի կողմից մուտքագրվում են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության անունով բացված հատուկ դրամային հաշվի վրա՝ տեղեկացնելով այդ մասին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը, որը պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում տալ կարգադրություն դեպոնացնող բանկին՝ ձեռք բերել մարված արժեթղթերի ընթացիկ (շուկայական) արժեքին համարժեք այլ արժեթղթեր:

31. Ձեռք բերված արժեթղթերը մուտքագրվում են դեպոնացված արժեթղթերի դեպո հաշվի վրա, որից հետո հատուկ դրամային հաշվում առկա մնացորդային գումարը կարող է ազատ տնօրինվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից: Ընդ որում, 5 աշխատանքային օրվա ընթացքում դեպոնացնող բանկին կարգադրություն չներկայացնելը համարվում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության համաձայնությունը հատուկ դրամային հաշվում առկա գումարը սույն Կանոնակարգի 6-րդ գլխի համաձայն դեպոնացնելու և համապատասխան բանկային հաշվի պայմանագրի բացակայության պարագայում՝ այդ պայմանագիրը կնքելու և դեպոնացվող դրամական միջոցների բանկային հաշիվ բացելու համար:

32. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում արժեթղթերի դեպոնացման համար բացված դեպո հաշվի պայմանագրի պատճենը և արժեթղթերի փաստացի դեպոնացումը վկայող տեղեկանք՝ համաձայն սույն Կանոնակարգի Հավելված 2-ի:

ԳԼՈՒԽ 7. ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՆՎԵՐԱԴԱՐՁԵԼԻ (ԱՆՀԵՏԿԱՆՉԵԼԻ) ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

33. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը, որպես դրամական փոխանցումների գծով պարտավորությունների մարման երաշխավորող միջոց, կարող է ներկայացնել սույն գլխով սահմանված պահանջներին բավարարող անվերադարձելի (անհետկանչելի) բանկային երաշխիք:

34. Երաշխիքը կարող է տրամադրվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից:

35. Տրամադրվող անվերադարձելի (անհետկանչելի) բանկային երաշխիքը պետք է պարունակի հետևյալ դրույթները.

1) երաշխիքը հանդիսանում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով չմարված պարտավորությունները երաշխավորող միջոց,
2) երաշխիքի բենեֆիցիարը հանդիսանում է Կենտրոնական բանկը,
3) երաշխիքը պետք է տրամադրված լինի առնվազն մեկ տարի ժամկետով,
4) երաշխիքը կարող է օգտագործվել բացառապես Կենտրոնական բանկի կողմից սույն Կանոնակարգի 8-րդ գլխով սահմանված կարգով:

36. Դրամական (փողային) փոխանցումների գծով պարտավորությունների երաշխավորման գործընթացի անընդհատության ապահովման համար երաշխիքի ժամկետը լրանալուց առնվազն 2 աշխատանքային օր առաջ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում նույն գումարի և նույն պայմանները բավարարող նոր անվերադարձելի (անհետկանչելի) բանկային երաշխիք կամ դրամական (փողային) միջոցների կամ արժեթղթերի դեպոնացումը հավաստող տեղեկանք՝ սույն Կանոնակարգի 5-րդ և 6-րդ գլուխների համաձայն:

ԳԼՈՒԽ 8. ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

37. Եթե դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունն ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի պահանջները, ապա նա պարտավոր է այդ մասին դիմում ներկայացնել Կենտրոնական բանկ՝ դիմումին կցելով պարտատերերի ցուցակը, որում պետք է նշված լինեն նրանց անունները (անվանումները), անձնագրի տվյալները, բնակության (գտնվելու) վայրը, պարտավորությունների չափը և տեսակը: Այդ ցուցակում պետք է ներառել նաև այն պարտատերերի վերաբերյալ տեղեկություններ, որոնց նկատմամբ պարտավորությունների կատարման ժամկետը չի լրացել:

38. Կենտրոնական բանկը, դիմումը և կից փաստաթղթերը ստանալուց հետո ուսումնասիրում է դրանք և եռամսյա ժամկետում որոշում է ընդունում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից ներկայացված դիմումը մերժելու կամ բավարարելու մասին:

39. Կենտրոնական բանկը մերժում է դիմումը, եթե ուսումնասիրության արդյունքում չեն հայտնաբերվում դրամական (փողային) փոխանցումների գծով չմարված պարտավորություններ:

40. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից ներկայացված դիմումը Կենտրոնական բանկի կողմից բավարարվելու դեպքում Կենտրոնական բանկը որոշում է ընդունում տվյալ կազմակերպության՝ պարտատերերի պահանջները բավարարելու ի վիճակի չլինելու մասին: Որոշման մեջ նշվում են պարտատերերի պահանջների բավարարման չափը՝ ըստ արժույթների, պարտատերերի անունները (անվանումները), անձնագրի տվյալները, բնակության (գտնվելու) վայրը: Որոշումը կազմվում է երկու օրինակից: Որոշման մեկ օրինակը ընդունման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է տվյալ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը:

41. Կենտրոնական բանկը որոշման ընդունման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակը ուղարկում է նաև այն առևտրային բանկին, որտեղ գտնվում են դեպոնացված դրամական միջոցները, արժեթղթերը կամ այն առևտրային բանկին, որը տրամադրել է բանկային երաշխիքը:

42. Դեպոնացված դրամական միջոցների կիրառման դեպքում բանկը Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ստանալու պահից սկսում է վճարում կատարել պարտատերերին՝ սույն Կանոնակարգի 37-րդ կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ նշված ցանկի համաձայն:

43. Անվերադարձելի (անհետկանչելի) բանկային երաշխիքի կիրառման դեպքում Կենտրոնական բանկը կարգադրություն է ներկայացնում երաշխիք տված բանկին՝ հանձնարարելով եռօրյա ժամկետում վճարել երաշխիքով սահմանված գումարը սույն Կանոնակարգի 37-րդ կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի որոշման մեջ նշված ցանկի համաձայն:

44. Դեպոնացված արժեթղթերի կիրառման դեպքում Կենտրոնական բանկը նախաձեռնում է դեպոնացված արժեթղթերի հետգնում և դրանից ստացված միջոցները փոխանցում է դեպոնացնող բանկի հաշվի վրա՝ կարգադրելով վճարել պարտատերերին սույն Կանոնակարգի 37-րդ կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի որոշման մեջ նշված ցանկի համաձայն:

45. Կենտրոնական բանկի որոշմամբ հաստատված պարտատերերի ցուցակներում ընդգրկված պարտատերերը երաշխավորող միջոցների հաշվին փոխհատուցման պահանջներ կարող են ներկայացնել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահից 6 ամսվա ընթացքում:

46. Սույն գլխով սահմանված կարգով պարտատերերի ցուցակում չընդգրկված, ինչպես նաև սույն Կանոնակարգի 45-րդ կետով սահմանված ժամկետից ուշ պահանջներ ներկայացնող պարտատերերի պահանջները չեն բավարարվում:

47. Դեպոնացված միջոցներն անբավարար լինելու դեպքում սույն գլխում նշված պարտատերերի միջև դրանք բաշխվում են պահանջների գումարներին համամասնորեն:

48. Այն դեպքում, երբ պարտատերերի պահանջները դեպոնացված միջոցների հաշվին ամբողջությամբ չեն բավարարվում, ապա դրանք կարող են բավարարվել «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

49. Պարտատերերի պահանջների բավարարման արդյունքում մնացած դրամական միջոցները կամ պարտատերերի չհայտնաբերման դեպքում երաշխավորող միջոցները վճարահաշվարկային կազմակերպությունները կարող են տնօրինել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահից 6 ամիս հետո:

ԳԼՈՒԽ 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

50. Սույն Կանոնակարգով սահմանված պահանջների չկատարման դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունները, ինչպես նաև դրանց ղեկավարները կրում են պատասխանատվություն՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

Հավելված 1
«Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ի

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հոկտեմբերի 14-ի
թիվ 269-Ն որոշմամբ

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքը տրվում _____
(կազմակերպության անվանումը)
կազմակերպությանը՝ գրանցված _____
(կազմակերպության գտնվելու վայրը)
հասցեում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացնելու համար և վկայում է այն մասին, որ վերոնշյալ կազմակերպությունը ս.թ. _____ բանկում
(բանկի լրիվ անվանումը)
դեպոնացրել է _____ դրամական միջոցներ:
(դեպոնացված գումարի չափը ՀՀ դրամով)

Վերոնշյալ կազմակերպության հետ կնքվել է բանկային հաշվի պայմանագիր, որտեղ սահմանված են հաշվի վարման և սպասարկման հետ կապված բոլոր պայմանները:

Հարգանքներով՝ _____
(բանկի անվանումը)

_____
(բանկի բարձրագույն մարմնի պաշտոնը և անուն/ազգանունը, ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 2
«Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ի

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հոկտեմբերի 14-ի
թիվ 269-Ն որոշմամբ

ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքը տրվում _____
(կազմակերպության անվանումը)
կազմակերպությանը՝ գրանցված _____
(կազմակերպության գտնվելու վայրը)

հասցեում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացնելու համար և վկայում է այն մասին, որ վերոնշյալ կազմակերպությունը ս.թ. _____ բանկում
(բանկի լրիվ անվանումը)

դեպոնացրել է _____ (ընթացիկ (շուկայական) արժեքով)
(ընթացիկ (շուկայական) արժեքի մեծությունը տառերով)

_____:
(դեպոնացված արժեթղթի տեսակը)

Վերոնշյալ կազմակերպության հետ կնքվել է արժեթղթերի դեպո հաշվի վարման և սպասարկման պայմանագիր:

Հարգանքներով՝ _____
(բանկի անվանումը)

_____
(բանկի բարձրագույն մարմնի պաշտոնը և անուն/ազգանունը, ստորագրությունը)

Կ. Տ.

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՆՈՅԵՄԲԵՐ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի նիստի «2011 թվականի դեկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի դեկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 25

Իրական հատվածի ցուցանիշներ 28

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 31

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում)

ՀՀ վճարային հաշվեկշիռ (վերլուծական ներկայացում)

ՀՀ միջազգային ներդրումային դիրքը 2011 թվականի հունիսի վերջի դրությամբ

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրքը 2011 թվականի հունիսի վերջի դրությամբ

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների և պարտավորությունների արժութային կազմը

ՀՀ համախառն արտաքին պարտքը 2011 թվականի հունիսի վերջի դրությամբ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 46

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 47

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 59

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 80
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 93
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 95
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 101
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունները արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (06.12.2011)

2011 թվականի դեկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Դարբինյանը, Օ. Աղասյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: Ինչպես ակնկալվում էր, 2011 թվականի նոյեմբերին 12-ամսյա գնաճը, նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատությամբ նվազելով 0.9 տոկոսային կետով, վերադարձել է 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայք և կազմել 4.8%: Այս ցուցանիշին պարենային ապրանքների նպաստումը կազմում է 3.4 տոկոսային կետ, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների նպաստումը՝ համապատասխանաբար 0.6 և 0.8 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թվականի նոյեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 1.2% գնաճ, որը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների 1.9% աճով (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ)՝ ի հաշիվ «Բանջարեղեն և կարտոֆիլ», «Կաթնամթերք», «Հրուշակեղեն» ապրանքախմբերի գների աճի, որոնց ընդհանուր նպաստումն ամսական գնաճին կազմել է 1.2 տոկոսային կետ: Ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների աճի նպաստումն ամսական գնաճին ընդամենը 0.15 տոկոսային կետ էր:

Թեև 2011 թվականի հոկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նվազել է և կազմել 2.4%, հունվար-հոկտեմբերի ՏԱՑ-ը գնահատվում է 5.9%: Ընդ որում, արդյունաբերության ճյուղում հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, թողարկման ծավալների աճը կազմել է 13.1%, գյուղատնտեսության ճյուղում՝ 14.1%, որը գրեթե ամբողջությամբ պայմանավորվել է բուսաբուծության ենթաճյուղի 24.1% աճով: Անասնապահության ենթաճյուղում արձանագրվել է 0.5% անկում: Ծառայությունների ծավալներն աճել են 5.9%-ով, առևտրի ծավալները՝ 3.3%-ով: Շինարարության թողարկման ծավալները նշված ժամանակահատվածում նվազել են 20.8%-ով: Անկման հիմնական պատճառը, ինչպես նշվել էր նախկինում, միջազգային վարկերի, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատումն է: Միջազգային վարկերի հաշվին իրականացվող շինարարության ծավալների անկումը պայմանավորված է ինչպես գյուղատնտեսության, ոռոգման և էներգետիկայի ոլորտներում միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտով, այնպես էլ խոշոր ճանապարհաշինական և ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված շինարարական ծրագրերի հետաձգմամբ:

Ըստ արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշների՝ արտահանման աճը պահպանվում է. 2011 թվականի հունվար-հոկտեմբերին գրանցվել է ապրանքների արտահանման 32.1% աճ. ներմուծման աճը կազմել է 13.0%: Գնահատվում է, որ ընթացիկ

հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը, նախորդ տարվա ցուցանիշի համեմատությամբ, էապես կնվազի և 2011 թվականի վերջին կկազմի շուրջ 12%՝ 2010 թվականի 14.5%-ի փոխարեն:

Հարկաբյուջետային հատվածը շարունակում է զսպող ազդեցություն թողնել գնաճային միջավայրի վրա՝ պայմանավորված բյուջեի սպասվող պակասուրդի՝ նախատեսվածից զգալիորեն ցածր մակարդակով:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները. Շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը հոկտեմբերի համեմատությամբ գրեթե չի փոփոխվել՝ կազմելով 9.62%: Միջբանկային ռեպո տոկոսադրույքը նույնպես մնացել է անփոփոխ՝ կազմելով 9.26%: Միաժամանակ, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում, նախորդ ամսվա համեմատ, միջին տոկոսադրույքն աճել է 0.66 տոկոսային կետով և կազմել 8.97 %:

2011 թ. նոյեմբերին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ ամսվա համեմատ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.59%-ով՝ կազմելով 382.78 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 0.40%-ով՝ կազմելով 519.21 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 2.74%-ով՝ կազմելով 12.41 դրամ: Նախորդ տարվա նոյեմբերի համեմատ դրամի միջին շուկայական փոխարժեքը դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 5.59%-ով, եվրոյի նկատմամբ՝ 4.79%-ով և ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 5.96%-ով:

Ֆինանսական շուկայի նկարագրված զարգացումների պայմաններում դրամավարկային ցուցանիշները նոյեմբերի վերջի դրությամբ արձանագրել են հետևյալ միտումները. դրամային ագրեգատների 12-ամսյա աճը, ինչպես և սպասվում էր, գերազանցել է ընդհանուր ագրեգատների աճը: Ավելին, դրամային ագրեգատների աճը գերազանցել է նաև կանխատեսումները: Դրամային ավանդների ավելի քան 40% և կանխիկի 17.2% աճով պայմանավորված՝ դրամային զանգվածի աճը կազմել է 26.5%: Արտարժութային ավանդների 12-ամսյա աճը կազմել է 23% (բացառելով փոխարժեքի փոփոխությունը՝ 16.1%), փողի զանգվածինը՝ 25.2%: Արդյունքում դոլարայնացման մակարդակը նվազել է 1.4%-ով: Տնտեսության վարկավորման աճը կազմել է 37.8%:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումները արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Համաշխարհային տնտեսության հեռանկարը շարունակում է մնալ անորոշ, և զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների լուծման շարունակական հետաձգման պայմաններում զարգացած զարգացող երկրներում նկատվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղում: Համաշխարհային պահանջարկի առկա մակարդակի պայմաններում հիմնական հումքային ապրանքների շուկաներում գները հարաբերականորեն կայուն են, իսկ պարենային ապրանքների շուկաներում, պայմանավորված առաջարկի վերաբերյալ լավատեսական սպասումներով, նկատվում են գնանկումային միտումներ: Աշխարհի խոշոր կենտրոնական բանկերի քաղաքականությունը զարգացումների այս համատեքստում հետևյալն է. ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը, չնայած գնաճի բարձր՝ 3.5% մակարդակին, ցածր տնտեսական ակտիվությանը և գործազրկության բարձր տեմպերին՝ ձեռնպահ է քաղաքականության ուղղության փոփոխությունից: Իսկ Եվրոպական կենտրոնական բանկը, չնայած պահպանվող բարձր՝ 3% գնաճին, տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերի գերակայության պայմաններում դեկտեմբերին դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը նվազեցրեց մինչև 1%:

Խորհուրդն արձանագրեց, որ ներկայումս համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսություն ներթափանցող գնաճային ճնշումները բացակայում են՝ ակնկալելով, որ

համաշխարհային տնտեսական աճի սպասվող դանդաղման պայմաններում հիմնական հումքային և պարենային ապրանքների շուկաներում գներն էականորեն չեն փոփոխվի, ինչը համապատասխանում է «Դրամավարկային քաղաքականության 2011 թվականի 4-րդ եռամսյակի ծրագրում» նկարագրված համաշխարհային տնտեսության զարգացման բազային սցենարին: Խորհուրդը միաժամանակ նշեց, որ դեռևս պահպանվում են զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների լուծման հետ կապված անորոշությունները:

ՀՀ տնտեսության զարգացումները նույնպես գնաճային ռիսկեր չեն նախանշում: Թեև 2011 թվականի չորրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա գրեթե չեզոք ազդեցություն, այնուամենայնիվ այն բնութագրվում է զսպող՝ հաշվի առնելով նախորդ եռամսյակների զսպողական քաղաքականության լագային ազդեցությունները:

Խորհուրդը համակարծիք է, որ պահպանվում է այն գնահատականը, որ աշխատանքի շուկայի և համախառն պահանջարկի արձանագրված և սպասվող զարգացումները գնաճային միջավայրի վրա էական ճնշումներ չեն ձևավորի:

Խորհուրդն ամփոփեց, որ ՀՀ տնտեսությունը զարգանում է 2011 թվականի Դրամավարկային քաղաքականության ծրագրերում կանխատեսված միտումներին համապատասխան, և 12-ամսյա հորիզոնում գնաճը մեծ հավանականությամբ կգտնվի 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում: Այս պարագայում ԿԲ խորհուրդը նպատակահարմար գտավ պահպանել «Դրամավարկային քաղաքականության 2011 թվականի 4-րդ եռամսյակի ծրագրում» նախանշված բազային սցենարին համապատասխանող ուղղությունը, ինչը ենթադրում է չեզոք քաղաքականության իրականացում:

2011 թվականի դեկտեմբերի 6-ի նիստում Խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%, լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 11.0% և 5.0%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2011թ. հոկտեմբեր*	*2011թ. հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2010թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*	*2011թ. նոյեմբեր*	*2011թ. նոյեմբերի իրական աճի ինդեքսը 2010թ. նոյեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	103.0[1]	-	102.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	89221.3[1]	117.0[1]	93969.2	118.8
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	461.8	95.6	654.8	161.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	117112.8	107.7	45294.1	106.2
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	182091.8	102.8	188281.5	103.4
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	46230.6	75.0	59066.5	86.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	78622.8	106.2	74203.6	104.4
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	113856[1]	100.5[2]	114766[1]	101.4[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1182.8		1182.2	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	70.5		69.5	
Գործազրկության մակարդակը *(%)*	6.0		5.9	

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2011 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.4[1]	102.3	98.0	102.0
Փետրվար	100.9[1]	103.3	103.6	103.4
Մարտ	100.8	99.4	87.4	102.8
Ապրիլ	99.8	100.3	104.2	102.0
Մայիս	100.0	98.7	97.9	97.4
Հունիս	98.6	100.1	100.4	86.1
Հուլիս	97.0	94.2[1]	98.9	78.5
Օգոստոս	99.4	101.4[1]	101.7	84.8
Սեպտեմբեր	100.8	100.8[1]	99.3	86.2
Հոկտեմբեր	100.3	99.0[1]	100.9	102.7
Նոյեմբեր	101.2	107.8	99.2	101.6
2011 թ. հունվար – նոյեմբերը 2010 թ. հունվար – նոյեմբերի համեմատությամբ	107.9	109.0	97.0	117.7

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2009*	*2010*	*2011*	*2011*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.2	1.7	3.4 [1]	3.4 [1]	10.3[1]
Փետրվար	-1.8	0.3	0.9 [1]	0.9 [1]	11.4 [1]
Մարտ	1.4	0.8	0.8	0.8	11.5
Ապրիլ	3.2	1.3	-0.2	5.0	8.9
Մայիս	1.6	1.0	0.0	5.0	9.0
Հունիս	-0.3	-0.8	-1.4	3.5	8.5
Հուլիս	-2.7	-0.8	-3.0	0.4	6.3
Օգոստոս	-0.4	1.3	-0.6	-0.2	4.8
Սեպտեմբեր	0.7	-0.2	0.8	0.6	6.2
Հոկտեմբեր	0.5	1.0	0.3	0.9	5.7
Նոյեմբեր	1.2	1.6	1.2	2.1	4.8
Դեկտեմբեր	2.0	1.8			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	6.5	9.4			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.4	8.2			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [2]

Անվանում	*2011 թ. նոյեմբերը 2011 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)* [2]
ՍԳԻ	**101.2**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.9**	**1.02**
Բանջարեղեն և կարտոֆիլ	118.3	1.15
Կաթնամթերք	102.2	0.09
Հրուշակեղեն	102.6	0.05
Մսամթերք	100.3	0.03
Միրգ	100.8	0.03
Հացամթերք	99.9	-0.01
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.3**	**0.05**
Հագուստ և գործվածք	100.9	0.03
Լվացող միջոցներ	101.3	0.02
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	99.4	-0.01
Ծառայություններ, որից՝	**100.3**	**0.10**
Տրանսպորտի	102.0	0.07
Բնակարանային, կոմունալ	100.2	0.03
Կենցաղային բնույթի	101.6	0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2008	2009	2010	2011
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.40	-0.29	0.48	0.71[4]
Փետրվար	0.83	-0.53	0.74	0.42[4]
Մարտ	0.66	1.14	0.82	0.64[4]
Ապրիլ	1.26	1.46	0.70	0.45[4]
Մայիս	0.55	0.41	0.04	0.32[4]
Հունիս	0.30	0.25	-0.22	0.37[4]
Հուլիս	0.02	-0.22	-0.42	0.21[4]
Օգոստոս	0.06	0.37	0.17	0.27[4]
Սեպտեմբեր	0.48	0.72	0.63	0.42[4]
Հոկտեմբեր	0.10	0.48	1.21	0.36[4]
Նոյեմբեր	0.25	0.62	1.18	0.41
Դեկտեմբեր	0.08	0.61	0.63	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.91	4.63	6.20	6.28[4]
Փետրվար	3.77	3.02	7.59	5.75[4]
Մարտ	4.54	3.33	7.14	5.68[4]
Ապրիլ	5.66	3.47	6.35	5.42[4]
Մայիս	5.94	3.37	5.92	5.75[4]
Հունիս	6.47	3.36	5.40	6.32[4]
Հուլիս	6.75	3.20	5.16	6.95[4]
Օգոստոս	6.97	3.52	4.96	7.01[4]
Սեպտեմբեր	6.99	3.71	4.86	7.01[4]
Հոկտեմբեր	6.21	4.16	5.53	6.09[4]
Նոյեմբեր	5.56	4.72	6.16	5.37
Դեկտեմբեր	5.37	5.25	6.26	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**5.37**
Տավարի միս	0.95
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.37
Խոզի միս	0.31
Բենզին	0.30
Կարագ	0.28
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.22
Պանիր տնական (կովի կաթից)	0.22
Կարամել	0.22
Շաքարավազ	0.21
Աղացած միս	0.15
Հավի բուդ	0.14
Աղացած սև սուրճ	0.14
Ջու	0.10
Ծխախոտ «Գառնի»	0.10
Մածուն	0.09
Նրբերշիկ	0.09
Բուսական յուղ (արևածաղկի)	0.09

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[3] ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ՝ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2011 թ. հունվար – հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – հոկտեմբերը 2010 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)*	*2011 թ. հունվար – նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – նոյեմբերը 2010 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1082.6	132.1	1206.7	131.1
Ներմուծում *(ՍԻՖ)*	3370.7	113.0	3751.1	112.3
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2288.1	105.7	2544.5	105.2

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – նոյեմբեր			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	982136	144349	837787	1114114	172036	942078
ԱՄՆ	108860	96998	11862	124426	108425	16001
Ուկրաինա	18319	19088	-769	20197	20724	-527
Ղազախստան	17277	2995	14282	19845	3082	16763
Գերմանիա	18814	21447	-2633	21175	23861	-2686
Իսպանիա	6907	9897	-2990	8368	10834	-2466
Ֆրանսիա	14881	16505	-1624	17062	18774	-1711
ԱՄԷ	24015	49477	-25462	26198	55500	-29303
Չինաստան	1600	72997	-71397	2068	80011	-77943
Թուրքիա	2339	35953	-33615	2639	40547	-37909
Այլ երկրներ	227646	177100	50546	270964	197761	73203
Ընդամենը	**1422795**	**646807**	**775988**	**1627056**	**731555**	**895500**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Նոյեմբեր			Հունվար – նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	127927	16257	111670	1216372	165980	1050392
ԱՄՆ	10702	10706	-4	123247	122784	463
Ուկրաինա	2007	2020	-12	24518	23126	1393
Ղազախստան	2376	188	2188	20933	2136	18797
Գերմանիա	2958	2543	415	23920	25144	-1224
Իսպանիա	766	838	-72	9026	9391	-366
Ֆրանսիա	1930	1852	77	16869	21776	-4907
ԱՄԷ	942	5184	-4242	17869	52542	-34673
Չինաստան	282	7977	-7695	3112	74431	-71318
Թուրքիա	795	3553	-2758	5756	33063	-27306
Այլ երկրներ	34030	16802	17228	282978	188249	94728
Ընդամենը	**184715**	**67921**	**116794**	**1744601**	**718622**	**1025979**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – Նոյեմբեր			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	937509	103798	833711	1062266	116950	945316
ԱՄՆ	59222	22058	37164	67789	24554	43235
Ուկրաինա	17601	12323	5278	19290	13433	5857
Ղազախստան	15912	938	14974	18434	1021	17414
Գերմանիա	9577	4985	4592	10586	5346	5240
Իսպանիա	5954	2038	3915	7232	2286	4946
Ֆրանսիա	8456	3263	5193	9443	3731	5712
ԱՄԷ	3220	6216	-2997	3581	6904	-3323
Չինաստան	532	5561	-5029	789	5970	-5181
Թուրքիա	1009	5670	-4661	1182	6246	-5064
Այլ երկրներ	83327	31661	51666	93144	35323	57821
Ընդամենը	**1142319**	**198512**	**943807**	**1293736**	**221763**	**1071973**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Նոյեմբեր			Հունվար – Նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	123388	13152	110237	1155191	126510	1028682
ԱՄՆ	4866	2525	2341	65198	24675	40523
Ուկրաինա	1898	1264	634	22987	14779	8207
Ղազախստան	2125	141	1985	18525	1650	16875
Գերմանիա	672	623	49	9540	6346	3194
Իսպանիա	724	314	410	6972	2803	4170
Ֆրանսիա	879	395	484	9473	7177	2296
ԱՄԷ	340	737	-396	3013	6922	-3910
Չինաստան	30	736	-706	446	7910	-7464
Թուրքիա	105	367	-262	2036	4424	-2388
Այլ երկրներ	7503	3297	4205	87189	35225	51963
Ընդամենը	**142531**	**23550**	**118981**	**1380569**	**238421**	**1142148**





ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔՆ ԸՍՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010					2011		
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.	III եռ.
Դրամական փոխանցումներ	**217.6**	**304.0**	**428.7**	**504.1**	**1433.7**	**262.9**	**407.2**	**528.8**
Աշխատողների զուտ աշխատավարձ (առանց եկամտահարկի, տրանսպորտային և ճանապարհորդությունների ծախսերի)	80.7	144.9	220.5	246.3	663.4	100.7	209.4	299.6
Աշխատողների աշխատավարձ	104.9	188.3	286.6	320.2	862.4	134.4	276.3	392.9
Ընթացիկ տրանսֆերտներ	124.7	142.1	184.3	230.0	690.6	153.3	183.9	210.9
Կապիտալ տրանսֆերտներ	12.2	17.0	23.9	27.8	79.7	8.9	13.8	18.3

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ[1,2]

2010	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	124.6	125.9	121.5	122.8	132.0	137.8	135.7	135.7	134.7	132.1	134.7	138.6
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	214.3	217.3	209.5	209.8	223.4	235.0	233.1	231.4	232.5	221.7	228.9	232.8
2011	**Հ**	**Փ**	**Մ[3]**	**Ա[3]**	**Մ[3]**	**Հ[3]**	**Հ[3]**	**Օ[3]**	**Ս[3]**	**Հ[3]**	**Ն[3]**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.5	125.1	128.3	127.5	126.3	
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.7	211.9	216.5	217.4	221.7	221.0	217.6	

[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով:
[2] 2009 թ. օգոստոսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը (նախկինում՝ 2000թ.=100)
[3] Ըստ ԿԲ նախնական գնահատումների:

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (ՍՏԱՆԴԱՐՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ)[1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010					2011		
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.	III եռ.
1	2	3	4	5	6	7	8	9
Ընթացիկ հաշիվ	**-416.7**	**-367.6**	**-269.9**	**-318.9**	**-1373.2**	**-411.7**	**-335.8**	**-171.0**
Ապրանքներ	**-470.8**	**-475.4**	**-508.9**	**-577.4**	**-2032.5**	**-461.7**	**-499.4**	**-521.7**
Կրեդիտ	**224.3**	**295.2**	**303.5**	**352.4**	**1175.4**	**307.1**	**401.0**	**437.5**
Դեբետ	**-695.1**	**-770.6**	**-812.4**	**-929.8**	**-3208.0**	**-768.8**	**-900.3**	**-959.2**
Ապրանքների առևտրի հաշվեկշիռ	-468.9	-469.8	-502.2	-575.9	-2016.9	-460.4	-502.9	-525.4
Արտահանում (ՖՕԲ)	218.6	287.7	294.4	344.0	1144.7	298.0	386.5	419.3
Ապրանքների արտահանում ըստ առևտրի վիճակագրության	199.5	255.8	270.9	314.9	1041.1	262.5	340.8	366.5
Հավաքագրված տվյալների ճշգրտում	19.1	31.9	23.5	29.1	103.6	35.5	45.7	52.8
Ներմուծում (ՖՕԲ)	-687.5	-757.5	-796.6	-919.9	-3161.5	-758.4	-889.4	-944.7
Ապրանքների ներմուծում ըստ առևտրի վիճակագրության (ՍԻՖ)	-800.0	-906.5	-953.3	-1089.1	-3749.0	-871.1	-1,023.6	-1,084.8
Հավաքագրված տվյալների ճշգրտում	112.5	149.0	156.7	169.2	587.4	112.7	134.2	140.1
Ապրանքներ վերամշակման համար	0.3	0.4	0.3	0.2	1.2	1.8	2.1	3.1
Կրեդիտ	0.3	0.5	0.4	0.3	1.5	1.8	2.2	3.1
Դեբետ	-	-0.1	-0.1	-0.1	-0.3	-	-0.1	-
Ապրանքներ ձեռք բերված տրանսպորտային կայաններում	-2.2	-6.0	-7.0	-1.7	-16.9	-3.1	1.4	0.6
Կրեդիտ	5.4	7.0	8.7	8.1	29.2	7.3	12.2	15.1
Դեբետ	-7.6	-13.1	-15.7	-9.8	-46.2	-10.4	-10.8	-14.5
Ծառայություններ	**-56.3**	**-60.2**	**-66.8**	**-58.9**	**-242.2**	**-68.7**	**-85.3**	**-71.9**
Կրեդիտ	**122.5**	**176.0**	**248.3**	**214.7**	**761.6**	**147.8**	**186.9**	**270.5**
Դեբետ	**-178.8**	**-236.2**	**-315.1**	**-273.7**	**-1003.7**	**-216.4**	**-272.1**	**-342.4**
Տրանսպորտ	-63.5	-64.8	-78.9	-84.6	-291.8	-67.8	-68.9	-68.4
Կրեդիտ	27.9	41.8	43.1	43.7	156.4	34.7	46.3	53.2
Դեբետ	-91.3	-106.6	-122.0	-128.2	-448.2	-102.5	-115.2	-121.7
որից՝ մարդատար	-5.5	1.5	-3.9	-6.3	-14.3	-7.0	-7.4	-4.9
Կրեդիտ	6.7	14.9	15.2	11.4	48.1	7.1	10.9	14.5
Դեբետ	-12.2	-13.4	-19.1	-17.7	-62.4	-14.0	-18.3	-19.4
բեռնատար	-52.1	-55.3	-61.4	-69.9	-238.7	-53.8	-54.7	-56.2
Կրեդիտ	17.7	23.1	23.1	27.7	91.5	23.8	30.6	33.3
Դեբետ	-69.8	-78.4	-84.5	-97.5	-330.2	-77.6	-85.3	-89.5
այլ	-5.8	-11.0	-13.5	-8.4	-38.8	-7.0	-6.7	-7.3
Կրեդիտ	3.5	3.8	4.8	4.6	16.8	3.9	4.9	5.5
Դեբետ	-9.3	-14.9	-18.4	-13.0	-55.6	-10.9	-11.6	-12.8
ծովային	-11.2	-16.3	-17.2	-19.6	-64.3	-12.2	-14.3	-15.2
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	-11.2	-16.3	-17.2	-19.6	-64.3	-12.2	-14.3	-15.2
օդային	-11.0	-9.9	-19.8	-15.3	-56.1	-13.4	-13.9	-12.7
Կրեդիտ	8.5	16.0	15.9	13.1	53.5	9.3	13.1	16.3
Դեբետ	-19.5	-25.9	-35.8	-28.3	-109.5	-22.7	-27.1	-29.0
այլ տրանսպորտ	-41.2	-38.6	-41.9	-49.7	-171.4	-42.2	-40.6	-40.5
Կրեդիտ	19.4	25.9	27.2	30.6	103.0	25.4	33.2	37.0
Դեբետ	-60.6	-64.5	-69.1	-80.3	-274.4	-67.6	-73.8	-77.5
Ճանապարհորդություն	-0.9	-6.4	-2.0	13.5	4.2	-6.9	-24.2	-9.8
Կրեդիտ	56.5	82.7	151.7	117.4	408.2	68.8	91.2	163.7
Դեբետ	-57.4	-89.1	-153.7	-103.8	-403.9	-75.7	-115.4	-173.5
գործնական	7.4	7.0	9.6	1.9	25.9	5.5	-1.6	1.2
Կրեդիտ	23.2	33.9	47.0	41.1	145.1	28.5	37.8	51.5
Դեբետ	-15.8	-26.9	-37.4	-39.2	-119.3	-23.0	-39.4	-50.3
անձնական	-8.3	-13.4	-11.6	11.7	-21.6	-12.4	-22.6	-11.0
Կրեդիտ	33.3	48.8	104.7	76.3	263.0	40.3	53.4	112.2
Դեբետ	-41.6	-62.2	-116.3	-64.6	-284.7	-52.7	-76.0	-123.2
Կապի ծառայություններ	9.9	13.0	10.5	10.3	43.7	10.2	7.7	7.8
Կրեդիտ	13.6	19.4	16.4	15.2	64.6	13.0	10.8	12.8
Դեբետ	-3.7	-6.3	-5.9	-4.9	-20.8	-2.8	-3.0	-5.0
Շինարարական ծառայություններ	0.6	1.8	1.7	1.6	5.8	0.7	1.6	1.8
Կրեդիտ	1.5	2.3	2.4	2.1	8.3	1.6	2.1	2.5
Դեբետ	-0.9	-0.5	-0.7	-0.5	-2.5	-0.9	-0.5	-0.7
Ապահովագրական ծառայություններ	-8.5	-12.9	-10.7	-11.9	-44.0	-9.1	-8.5	-8.8
Կրեդիտ	2.5	3.4	3.3	3.9	13.1	3.5	5.5	4.9
Դեբետ	-11.0	-16.3	-14.0	-15.8	-57.1	-12.5	-13.9	-13.7

1	2	3	4	5	6	7	8	9
Ֆինանսական (առանց ապահովագրության)	-1.6	-0.1	-	-0.2	-2.0	-0.8	-1.0	-0.7
Կրեդիտ	1.2	1.7	2.1	2.1	7.1	1.6	1.8	1.8
Դեբետ	-2.9	-1.8	-2.1	-2.3	-9.0	-2.4	-2.8	-2.4
Համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	10.5	13.3	17.5	17.3	58.6	11.2	13.4	14.6
Կրեդիտ	10.9	14.4	19.1	19.0	63.5	11.5	14.5	15.7
Դեբետ	-0.5	-1.1	-1.6	-1.7	-4.9	-0.2	-1.1	-1.1
Այլ գործնական ծառայություններ	-2.6	-4.7	-5.0	-5.3	-17.6	-6.1	-7.8	-8.9
Կրեդիտ	2.6	2.6	2.2	2.3	9.6	4.7	4.7	5.1
Դեբետ	-5.2	-7.2	-7.2	-7.6	-27.2	-10.8	-12.5	-14.0
Մասնավոր, մշակույթի և հանգստի ծառայություններ	0.2	2.2	2.1	2.8	7.3	0.4	3.2	2.2
Կրեդիտ	2.9	5.0	5.2	5.7	18.9	3.3	4.7	5.3
Դեբետ	-2.7	-2.9	-3.1	-3.0	-11.6	-2.9	-1.4	-3.1
Պետական ծառայություններ այլ կատեգորիաներին չվերաբ.	-0.4	-1.7	-2.0	-2.5	-6.5	-0.5	-1.0	-1.7
Կրեդիտ	2.8	2.8	2.9	3.3	11.8	5.1	5.3	5.5
Դեբետ	-3.2	-4.5	-4.9	-5.8	-18.4	-5.6	-6.3	-7.2
Եկամուտներ	**5.7**	**57.6**	**148.3**	**127.0**	**338.6**	**-9.3**	**105.9**	**237.1**
Կրեդիտ	**119.0**	**200.8**	**302.3**	**337.6**	**959.7**	**148.6**	**290.1**	**407.1**
Դեբետ	**-113.3**	**-143.2**	**-154.0**	**-210.6**	**-621.1**	**-157.8**	**-184.2**	**-170.0**
Աշխատողների աշխատավարձ՝ ներառյալ սահմանային, սեզոնային և այլ աշխատողների	80.8	158.6	252.0	279.3	770.8	99.8	231.9	348.8
Կրեդիտ	109.6	193.1	291.3	324.9	918.9	134.4	276.3	392.9
Դեբետ	-28.8	-34.5	-39.3	-45.6	-148.1	-34.5	-44.4	-44.1
Եկամուտներ ներդրումներից	-75.1	-101.0	-103.7	-152.3	-432.1	-109.1	-126.0	-111.8
Կրեդիտ	9.4	7.8	11.0	12.7	40.9	14.2	13.9	14.1
Դեբետ	-84.5	-108.8	-114.7	-165.0	-473.0	-123.3	-139.8	-125.9
Ուղղակի ներդրումներից	-61.1	-68.8	-94.0	-140.0	-363.9	-83.6	-95.6	-81.1
Կրեդիտ	-0.4	-0.1	0.1	0.5	0.1	-0.1	0.1	0.3
Դեբետ	-60.7	-68.7	-94.1	-140.5	-363.9	-83.6	-95.7	-81.4
Պորտֆելային ներդրումներից	5.2	2.5	5.5	5.8	19.0	6.5	5.5	6.6
Կրեդիտ	5.5	3.7	6.0	6.0	21.2	7.1	6.5	6.7
Դեբետ	-0.3	-1.2	-0.5	-0.2	-2.2	-0.6	-1.1	-0.1
Այլ ներդրումներից	-19.2	-34.7	-15.2	-18.2	-87.2	-32.0	-35.8	-37.3
Կրեդիտ	4.3	4.3	4.9	6.1	19.6	7.1	7.2	7.1
Դեբետ	-23.6	-38.9	-20.1	-24.3	-106.8	-39.1	-43.0	-44.4
Ընթացիկ տրանսֆերտներ	**104.7**	**110.4**	**157.4**	**190.4**	**562.9**	**127.9**	**143.0**	**185.6**
Կրեդիտ	**143.8**	**162.1**	**217.7**	**260.2**	**783.7**	**174.5**	**209.3**	**261.7**
Դեբետ	**-39.1**	**-51.7**	**-60.2**	**-69.8**	**-220.8**	**-46.6**	**-66.4**	**-76.1**
Պետական կառավարում	15.5	16.0	29.3	25.0	85.8	17.0	20.4	45.9
Կրեդիտ	16.4	16.9	30.2	26.1	89.5	18.1	21.4	47.0
Դեբետ	-0.9	-0.9	-0.9	-1.0	-3.7	-1.1	-1.1	-1.1
Այլ (մասնավոր)	89.2	94.4	128.2	165.4	477.1	110.9	122.6	139.6
Կրեդիտ	127.4	145.2	187.5	234.1	694.2	156.4	187.9	214.7
Դեբետ	-38.2	-50.8	-59.4	-68.8	-217.1	-45.5	-65.3	-75.1
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	**401.5**	**355.5**	**273.2**	**325.5**	**1355.7**	**387.1**	**335.0**	**202.7**
Կապիտալի հաշիվ	**19.9**	**24.3**	**29.8**	**33.9**	**107.9**	**26.3**	**25.5**	**25.9**
Կրեդիտ	**22.5**	**28.5**	**33.6**	**38.6**	**123.1**	**28.1**	**33.1**	**33.9**
Դեբետ	**-2.6**	**-4.2**	**-3.9**	**-4.6**	**-15.2**	**-1.8**	**-7.5**	**-8.0**
Կապիտալ տրանսֆերտներ	**19.9**	**24.3**	**29.8**	**33.9**	**107.9**	**26.3**	**25.5**	**25.9**
Կրեդիտ	**22.5**	**28.5**	**33.6**	**38.6**	**123.1**	**28.1**	**33.1**	**33.9**
Դեբետ	**-2.6**	**-4.2**	**-3.9**	**-4.6**	**-15.2**	**-1.8**	**-7.5**	**-8.0**
Պետական կառավարում	9.3	10.0	8.3	9.7	37.4	18.0	17.9	13.2
Կրեդիտ	9.3	10.0	8.3	9.7	37.4	18.0	17.9	13.2
Դեբետ	-	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	10.6	14.3	21.4	24.3	70.6	8.3	7.7	12.6
Կրեդիտ	13.2	18.4	25.3	28.9	85.8	10.1	15.2	20.6
Դեբետ	-2.6	-4.2	-3.9	-4.6	-15.2	-1.8	-7.5	-8.0
Չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում/վաճառք	**-**	**-**	**-**	**-**	**-**	-	-	-
Ֆինանսական հաշիվ	**381.6**	**331.2**	**243.4**	**291.6**	**1247.8**	**360.8**	**309.5**	**176.9**
Ուղղակի ներդրումներ	**125.0**	**108.4**	**165.3**	**163.2**	**561.8**	**155.8**	**119.8**	**128.5**
Արտերկրներում	-1.3	-1.8	-2.2	-2.9	-8.3	-2.2	-9.0	-9.9
Բաժնետիրական կապիտալում	-1.7	-2.0	-2.1	-2.4	-8.2	-2.2	-8.9	-9.6
Վերաներդրված եկամուտներ	0.4	0.1	-0.1	-0.5	-0.1	0.1	-0.1	-0.3
Այլ կապիտալ	-	-	-	-	-	-	-	-

1	2	3	4	5	6	7	8	9
Հաշվետու երկրում	126.2	110.2	167.5	166.1	570.1	158.0	128.8	138.4
Բաժնետիրական կապիտալում	13.8	43.3	52.2	33.9	143.2	44.2	53.2	41.0
Վերաներդրված եկամուտներ	59.6	54.4	75.2	69.1	258.3	78.6	50.3	68.1
Այլ կապիտալ	52.8	12.6	40.2	63.1	168.6	35.1	25.3	29.3
Պորտֆելային ներդրումներ	**6.1**	**3.3**	**1.2**	**0.1**	**10.7**	**-10.5**	**-4.4**	**1.3**
Ակտիվներ	-0.1	-0.2	-0.3	-0.8	-1.5	0.2	-2.7	0.5
Կապիտալի մասնակցություն	-	-0.1	-0.1	-	-0.1	0.4	-0.3	0.7
Պարտքի արժեթղթեր	-0.1	-0.2	-0.2	-0.9	-1.4	-0.2	-2.4	-0.2
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-0.1	-0.2	-0.2	-0.2	-0.7	-0.2	-0.8	-0.1
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-	-0.7	-0.7	-0.0	-1.7	-0.1
Պարտավորություններ	6.3	3.5	1.4	1.0	12.2	-10.7	-1.7	0.8
Կապիտալի մասնակցություն	-	0.1	0.3	-	0.4	0.0	-0.3	0.5
Պարտքի արժեթղթեր	6.3	3.4	1.1	1.0	11.8	-10.7	-1.4	0.3
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	6.3	3.3	0.5	0.5	10.6	-10.2	-0.8	0.3
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	0.1	-	0.0	-0.0	0.0
Բանկեր	6.3	3.3	0.5	0.5	10.6	-10.3	-0.8	0.3
Այլ հատվածներ	-	-	-	-	-	-	-	-
Դրամի շուկայի գործիքներ	-	0.1	0.7	0.4	1.2	-0.5	-0.6	-0.0
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	-	0.1	0.7	0.4	1.3	-0.5	-0.6	-0.0
Բանկեր	-	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	-	-	-	-	-	-	-	-
Ֆինանսական ածանցյալներ (զուտ)	-	-	-	-	-	-	-	-
Այլ ներդրումներ	**198.9**	**143.5**	**61.7**	**159.5**	**563.7**	**138.8**	**138.1**	**265.7**
Ակտիվներ	40.9	-0.9	-156.2	-129.5	-245.6	-28.5	-13.9	-103.9
Առևտրային վարկ	-2.4	-3.1	-3.3	-3.8	-12.5	-3.1	-4.1	-4.4
Այլ հատվածներ	-2.4	-3.1	-3.3	-3.8	-12.5	-3.1	-4.1	-4.4
Վարկեր	-8.9	-30.6	-	-32.7	-72.3	-19.8	2.4	4.6
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	0.1	-	0.1	-	0.2	0.6	-	0.4
Բանկեր	-2.4	-28.6	4.1	-30.7	-57.5	-20.3	3.0	4.9
Այլ հատվածներ	-6.7	-2.1	-4.3	-2.0	-15.0	-0.1	-0.6	-0.7
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	50.9	34.3	-145.9	-90.2	-150.9	4.6	-14.7	-96.7
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-0.0	0.0	-0.0
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	3.9	3.8	4.1
Բանկեր	-38.0	40.0	-31.6	82.1	52.6	-4.0	-17.6	-11.1
Այլ հատվածներ	88.8	-5.8	-114.3	-172.3	-203.6	4.7	-0.8	-89.7
Այլ ակտիվներ	1.4	-1.4	-7.0	-2.8	-9.9	-10.2	2.4	-7.3
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.1	0.7	-2.2	1.2	-0.2	-0.2	2.4	-1.9
Պետական կառավարման մարմիններ	-1.5	-0.4	-	-0.1	-1.9	-1.3	-0.4	-0.6
Բանկեր	3.8	-1.8	-4.6	2.8	0.2	-8.1	2.9	-6.7
Այլ հատվածներ	-1.0	-	-0.2	-6.8	-7.9	-0.6	-2.4	1.8
Պարտավորություններ	158.0	144.4	218.0	289.0	809.4	167.3	152.1	369.6
Առևտրային վարկ	-0.2	3.3	-1.6	12.6	14.2	0.5	1.8	19.5
Այլ հատվածներ	-0.2	3.3	-1.6	12.6	14.2	0.5	1.8	19.5
Վարկեր	176.9	117.6	155.8	265.9	716.1	96.3	90.9	209.6
Դրամավարկային կարգավորման մարմիններ	35.9	15.4	5.5	15.6	72.4	-0.3	-11.8	28.7
ԱՄՀ-ի վարկի օգտագործում	35.9	15.5	0.4	15.7	67.5	-0.3	-11.6	27.9
Մուտքեր	37.0	26.9	1.9	28.7	94.5	2.6	2.5	30.2
Վճարումներ	-1.1	-11.4	-1.5	-13.0	-27.0	-3.0	-14.1	-2.3
Այլ երկարաժամկետ	-	-0.1	5.1	-0.1	4.9	0.0	-0.2	0.8
Պետական կառավարման մարմիններ	101.0	46.6	69.7	71.6	288.9	23.2	31.7	94.9
Մուտքեր	109.8	49.6	77.7	76.6	313.7	36.2	51.4	108.7
Վճարումներ	-8.8	-3.0	-7.9	-5.1	-24.8	-13.0	-19.7	-13.8
Բանկեր	8.1	15.1	73.1	94.3	190.6	39.6	85.0	101.2
Այլ հատվածներ	31.9	40.5	7.5	84.4	164.3	33.8	-14.0	-15.3
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-20.6	9.9	53.6	11.6	54.4	76.2	39.5	136.2
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-0.1	0.2	-0.1	-	-	-0.1	0.2	0.1
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Բանկեր	-20.6	9.7	53.7	11.6	54.3	76.3	39.2	136.1
Այլ հատվածներ	-	-	-	-	-			
Այլ պարտավորություններ	1.9	13.6	10.3	-1.1	24.7	-5.7	20.0	4.3
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-0.6	-	-0.1	0.1	-0.6	0.0	-0.1	-0.0
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Բանկեր	2.4	2.9	7.6	-0.6	12.3	-4.7	5.1	-2.4
Այլ հատվածներ	0.2	10.7	2.7	-0.6	13.0	-1.1	15.0	6.8

1	2	3	4	5	6	7	8	9
Պահուստային ակտիվներ	**51.5**	**76.0**	**15.2**	**-31.3**	**111.5**	**76.7**	**55.9**	**-218.7**
Մոնետար ոսկի	-	-	-	-	-	-	-	-
Հատուկ փոխառության իրավունքներ	2.4	74.3	2.4	9.5	88.7	2.9	15.4	0.5
ԱՄՀ-ում պահուստային դիրք	-	-	-	-	-	-	-	-
Արտարժութային ակտիվներ	49.1	1.6	12.8	-40.8	22.8	74.0	40.4	-219.1
Կանխիկ արտարժույթ և ավանդներ	-213.5	248.2	71.9	17.9	124.5	15.0	19.7	-107.5
Դրամավարկային կարգավորման մարմիններում	-192.3	249.0	67.0	19.4	143.0	42.0	25.6	-70.6
Բանկերում	-21.1	-0.8	4.9	-1.5	-18.5	-27.0	-5.9	-37.0
Արժեթղթեր	262.4	-246.3	-59.1	-58.7	-101.7	59.0	20.7	-111.6
Բաժնետոմսեր	-	-	-	-	-	-	-	-
Պարտատոմսեր և մուրհակներ	262.4	-246.3	-19.8	-99.0	-102.8	123.4	-45.8	-94.7
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-39.3	40.4	1.1	-64.4	66.5	-17.0
Ֆինանսական ածանցյալներ	0.2	-0.3	0.1	-	-	-0.1	-0.0	0.0
Այլ պահանջներ	-	0.1	-	-	-	-0.2	0.2	0.0
Զուտ սխալներ և բացթողումներ	**15.2**	**12.1**	**-3.3**	**-6.6**	**17.5**	**24.6**	**0.8**	**-31.8**

[1] 2011 թվականի 1-ին եռամսյակից սկսած ՀՀ վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքն ու արտաքին պարտքը կազմվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից և հրապարակվում եռամսյակային կտրվածքով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականում:

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ)

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010					2011		
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.	III եռ.
Ընթացիկ հաշիվ	**-416.7**	**-367.6**	**-269.9**	**-318.9**	**-1,373.2**	**-411.7**	**-335.8**	**-171.0**
Ապրանքներ կրեդիտ	224.3	295.2	303.5	352.4	1,175.4	307.1	401.0	437.5
Արտահանում (ՖՕԲ)	218.6	287.7	294.4	344.0	1,144.7	298.0	386.5	419.3
Այլ	5.7	7.5	9.1	8.4	30.8	9.1	14.5	18.2
Ապրանքներ դեբետ	-695.1	-770.6	-812.4	-929.8	-3,208.0	-768.8	-900.3	-959.2
Ներմուծում (ՖՕԲ)	-687.5	-757.5	-796.6	-919.9	-3,161.5	-758.4	-889.4	-944.7
Այլ	-7.6	-13.2	-15.8	-9.9	-46.5	-10.4	-10.9	-14.5
Ապրանքների հաշվեկշիռ	-470.8	-475.4	-508.9	-577.4	-2,032.5	-461.7	-499.4	-521.7
Ծառայություններ կրեդիտ	122.5	176.0	248.3	214.7	761.6	147.8	186.9	270.5
Տրանսպորտային ծառայություններ	27.9	41.8	43.1	43.7	156.4	34.7	46.3	53.2
Այլ	94.6	134.2	205.2	171.1	605.1	113.0	140.5	217.3
Ծառայություններ դեբետ	-178.8	-236.2	-315.1	-273.7	-1,003.7	-216.4	-272.1	-342.4
Տրանսպորտային ծառայություններ	-91.3	-106.6	-122.0	-128.2	-448.2	-102.5	-115.2	-121.7
Այլ	-87.4	-129.6	-193.1	-145.4	-555.5	-113.9	-156.9	-220.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-527.1	-535.6	-575.7	-636.3	-2,274.7	-530.4	-584.6	-593.6
Եկամուտներ	5.7	57.6	148.3	127.0	338.6	-9.3	105.9	237.1
կրեդիտ	119.0	200.8	302.3	337.6	959.7	148.6	290.1	407.1
դեբետ	-113.3	-143.2	-154.0	-210.6	-621.1	-157.8	-184.2	-170.0
Ընթացիկ տրանսֆերտներ	104.7	110.4	157.4	190.4	562.9	127.9	143.0	185.6
կրեդիտ	143.8	162.1	217.7	260.2	783.7	174.5	209.3	261.7
դեբետ	-39.1	-51.7	-60.2	-69.8	-220.8	-46.6	-66.4	-76.1
Կապիտալի հաշիվ	**19.9**	**24.3**	**29.8**	**33.9**	**107.9**	**26.3**	**25.5**	**25.9**
կրեդիտ	**22.5**	**28.5**	**33.6**	**38.6**	**123.1**	**28.1**	**33.1**	**33.9**
դեբետ	**-2.6**	**-4.2**	**-3.9**	**-4.6**	**-15.2**	**-1.8**	**-7.5**	**-8.0**
Ֆինանսական հաշիվ	**381.6**	**331.2**	**243.4**	**291.6**	**1,247.8**	**284.4**	**265.2**	**367.5**
Ուղղակի ներդրումներ արտերկրում	-1.3	-1.8	-2.2	-2.9	-8.3	-2.2	-9.0	-9.9
Ուղղակի ներդրումներ հաշվետու երկրում	126.2	110.2	167.5	166.1	570.1	158.0	128.8	138.4
Պորտֆելային ներդրումներ	6.1	3.3	1.2	0.1	10.7	0.2	-2.7	0.5
Ակտիվներ	-0.1	-0.2	-0.3	-0.8	-1.5	0.2	-2.7	0.5
Կապիտալի մասնակցություն	-0.0	-0.1	-0.1	0.0	-0.1	0.4	-0.3	0.7
Պարտքի արժեթղթեր	-0.1	-0.2	-0.2	-0.9	-1.4	-0.2	-2.4	-0.2
Պարտավորություններ	6.3	3.5	1.4	1.0	12.2	-10.7	-1.7	0.8
Կապիտալի մասնակցություն	0.0	0.1	0.3	0.0	0.4	0.0	-0.3	0.5
Պարտքի արժեթղթեր	6.3	3.4	1.1	1.0	11.8	-10.7	-1.4	0.3
Այլ ներդրումներ	198.9	143.5	61.7	159.5	563.7	139.1	149.8	237.7
Ակտիվներ	40.9	-0.9	-156.2	-129.5	-245.6	-28.5	-13.9	-103.9
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.1	0.7	-2.2	1.2	-0.2	-0.2	2.4	-1.9
Պետական կառավարման մարմիններ	-1.4	-0.4	0.1	-0.1	-1.7	3.2	3.4	3.8
Բանկեր	-36.5	9.7	-32.1	54.2	-4.7	-32.4	-11.7	-12.8
Այլ հատվածներ	78.7	-10.9	-122.0	-184.8	-239.0	0.9	-8.0	-93.0
Պարտավորություններ	158.0	144.4	218.0	289.0	809.4	167.7	163.7	341.6
Դրամավարկային կարգավորման մարմիններ	35.2	15.5	5.3	15.8	71.8	-0.0	-0.1	0.9
Պետական կառավարման մարմիններ	101.0	46.6	69.7	71.6	288.9	23.2	31.7	94.9
Բանկեր	-10.1	27.7	134.4	105.3	257.3	111.2	129.3	234.9
Այլ հատվածներ	31.9	54.5	8.6	96.4	191.4	33.3	2.8	10.9
Սխալներ և բացթողումներ	**15.2**	**12.1**	**-3.3**	**-6.6**	**17.5**	**24.6**	**0.8**	**-31.8**
Պահուստային ակտիվներ	**51.5**	**76.0**	**15.2**	**-31.3**	**111.5**	**76.7**	**55.9**	**-218.7**
ԱՄՀ-ի վարկի օգտագործում	**35.9**	**15.5**	**0.4**	**15.7**	**67.5**	**-0.3**	**-11.6**	**27.9**
Հատուկ ֆինանսավորում	**0.0**	**0.1**	**-0.0**	**0.1**	**0.1**	**-0.0**	**-0.1**	**0.1**

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	Ներդրումային դիրքը 30.06.2011	Փոփոխություններ՝ իրականացված ի հաշիվ				Ընդհանուր փոփոխություններ	Ներդրումային դիրքը 30.09.2011
		գործառնությունների	գների փոփոխությունների	փոխարժեքի փոփոխությունների	այլ ճշգրտումների		
1	2	3	4	5	6	7	8
ԶՈՒՏ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ	**-6463.79**	**-172.80**	**-7.68**	**-12.37**	**-3.16**	**-196.01**	**-6659.80**
Ակտիվներ	**4574.82**	**335.97**	**-10.11**	**-49.52**	**0.14**	**276.48**	**4851.30**
Ուղղակի ներդրումներ արտերկրում	**96.55**	**9.89**	**-**	**-0.05**	**-**	**9.84**	**106.39**
Բաժնետիրական կապիտալում և վերաներդրված շահույթ	87.07	9.89	-	-0.05	-	9.84	96.91
Այլ կապիտալ	9.48	-	-	-	-	-	9.48
Պորտֆելային ներդրումներ	**18.07**	**-0.50**	**-0.01**	**-0.44**	**-**	**-0.95**	**17.12**
Կապիտալի մասնակցություն	3.52	-0.67	-0.01	0.02	-	-0.66	2.87
Պարտքի արժեթղթեր	14.55	0.17	-	-0.46	-	-0.29	14.25
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	12.15	0.06	-	-0.13	-	-0.07	12.08
Դրամի շուկայի գործիքներ	2.40	0.10	-	-0.32	-	-0.22	2.18
Այլ ներդրումներ	**2677.73**	**107.93**	**-**	**-13.80**	**0.14**	**94.28**	**2772.01**
Առևտրային վարկ	59.67	4.40	-	-	-	4.40	64.07
Այլ հատվածներ	59.67	4.40	-	-	-	4.40	64.07
Վարկեր	287.60	-4.59	-	-1.95	0.14	-6.40	281.20
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	16.63	-0.36	-	-	0.15	-0.21	16.42
Բանկեր	201.43	-4.93	-	-1.95	-0.01	-6.89	194.54
Այլ հատվածներ	69.54	0.70	-	-	-	0.70	70.24
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	2257.73	100.78	-	-11.08	-	89.70	2347.43
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.00	-0.00	-	-0.00	-	-0.00	0.00
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	-	-
Բանկեր	318.83	11.08	-	-11.08	-	0.00	318.83
Այլ հատվածներ	1938.90	89.70	-	-	-	89.70	2028.60
Այլ ակտիվներ	72.73	7.35	-	-0.77	0.00	6.57	79.31
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.27	1.90	-	-0.02	-	1.88	2.15
Պետական կառավարման մարմիններ	12.58	0.57	-	-	-	0.57	13.15
Բանկեր	42.72	6.67	-	-0.73	-	5.94	48.66
Այլ հատվածներ	17.16	-1.79	-	-0.02	0.00	-1.81	15.35
Պահուստային ակտիվներ	**1782.47**	**218.65**	**-10.10**	**-35.23**	**-**	**173.31**	**1955.78**
Մոնետար ոսկի	-	-	-	-	-	-	-
Հատուկ փոխառության իրավունք	16.42	-0.48	-	-0.36	-	-0.84	15.58
ԱՄՀ-ում պահուստային դիրք	-	-	-	-	-	-	-
Արտարժութային ակտիվներ	1766.05	219.13	-10.10	-34.87	-	174.16	1940.20
Կանխիկ և ավանդներ	430.50	107.52	-	-5.86	-	101.66	532.16
Դրամավարկային կարգավորման մարմիններում	272.98	70.56	-	-2.12	-	68.44	341.43
Բանկերում	157.52	36.95	-	-3.74	-	33.22	190.73
Արժեթղթեր	1335.54	111.63	-10.10	-29.01	-	72.52	1408.06
Պարտատոմսեր և մուրհակներ	1078.38	94.68	-2.28	-18.86	-	73.54	1151.92
Դրամի շուկայի գործիքներ	257.16	16.96	-7.83	-10.15	-	-1.02	256.14
Ֆինանսական ածանցյալներ	0.00	-0.02	-	-	-	-0.02	-0.02
Այլ պահանջներ	0.00	-0.00	-	-0.00	-	-0.00	0.00
Պարտավորություններ	**11038.62**	**508.77**	**-2.44**	**-37.16**	**3.31**	**472.48**	**11511.10**
Ուղղակի ներդրումներ հաշվետու երկրում	**4914.69**	**138.41**	**-2.44**	**11.38**	**-18.64**	**128.72**	**5043.42**
Բաժնետիրական կապիտալում և վերաներդրված շահույթ	4202.65	109.12	-2.44	11.44	-18.64	99.49	4302.14
Այլ կապիտալ	712.05	29.29	-	-0.06	-	29.23	741.28

1	2	3	4	5	6	7	8
Պորտֆելային ներդրումներ	**16.50**	**0.75**	**0.00**	**0.35**	**0.08**	**1.18**	**17.68**
Կապիտալի մասնակցություն	10.51	0.49	-	-0.10	0.08	0.48	10.99
Բանկեր	10.35	0.49	-	-0.09	0.08	0.48	10.83
Այլ հատվածներ	0.16	-	-	-0.00	-	-0.00	0.16
Պարտքի արժեթղթեր	5.99	0.26	0.00	0.45	-	0.71	6.69
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	5.75	0.29	0.00	0.45	-	0.74	6.49
Դրամի շուկայի գործիքներ	0.24	-0.03	0.00	-0.00	-	-0.03	0.20
Այլ ներդրումներ	**6107.42**	**369.61**	**-**	**-48.89**	**21.86**	**342.58**	**6450.00**
Առևտրային վարկ	76.95	19.50	-	-	-	19.50	96.46
Այլ հատվածներ	76.95	19.50	-	-	-	19.50	96.46
Երկարաժամկետ	50.57	18.53	-	-	-	18.53	69.10
Կարճաժամկետ	26.38	0.98	-	-	-	0.98	27.36
Վարկեր	5247.10	209.61	-	-40.01	21.86	191.47	5438.56
Դրամավարկային կարգավորման մարմիններ	575.14	28.72	-	-15.83	-0.00	12.89	588.03
ԱՄՀ-ի վարկի օգտագործում	495.11	27.92	-	-12.57	-	15.35	510.46
Այլ երկարաժամկետ	80.03	0.80	-	-3.26	-0.00	-2.46	77.56
Պետական կառավարման մարմիններ	2874.80	94.93	-	-30.47	-	64.45	2939.25
Բանկեր	779.66	101.24	-	-1.62	-	99.62	879.29
Երկարաժամկետ	700.36	22.36	-	1.49	-	23.85	724.21
Կարճաժամկետ	79.31	78.89	-	-3.11	-	75.77	155.08
Այլ հատվածներ	1017.49	-15.27	-	7.91	21.86	14.50	1032.00
Երկարաժամկետ	848.71	-15.46	-	6.34	17.44	8.33	857.03
Կարճաժամկետ	168.79	0.18	-	1.57	4.42	6.18	174.96
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	556.86	136.19	-	-4.96	-	131.23	688.09
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.38	0.10	-	-0.00	-	0.09	0.47
Պետական կառավարման մարմիններ	-					-	-
Բանկեր	556.48	136.09	-	-4.95	-	131.14	687.61
Այլ հատվածներ	-					-	-
Այլ պարտավորություններ	226.51	4.30	-	-3.93	0.00	0.38	226.89
Դրամավարկային կարգավորման մարմիններ	141.05	-0.05	-	-3.42	-	-3.46	137.59
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	-	-
Բանկեր	18.41	-2.43	-	-0.47	-	-2.91	15.50
Այլ հատվածներ	67.05	6.78	-	-0.03	0.00	6.75	73.80

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	Ներդրումային դիրքը 30.06.2011	Փոփոխություններ՝ իրականացված ի հաշիվ				Ընդհանուր փոփոխություններ	Ներդրումային դիրքը 30.09.2011
		գործառնությունների	գների փոփոխությունների	փոխարժեքի փոփոխությունների	այլ ճշգրտումների		
1	2	3	4	5	6	7	8
ԱԿՏԻՎՆԵՐ	**572.6**	**13.1**	**-**	**-14.1**	**-0.0**	**-1.1**	**571.5**
Ուղղակի ներդրումներ արտերկրում	**5.5**	**0.3**	**-**	**-0.0**	**-**	**0.2**	**5.7**
Բաժնետիրական կապիտալ	1.0	-	-	-0.0	-	-0.0	1.0
Վերաներդրված շահույթ	4.5	0.3	-	-0.0	-	0.3	4.8
Այլ կապիտալ							
Պորտֆելային ներդրումներ	**4.1**	**-0.0**	**-**	**-0.3**	**-**	**-0.4**	**3.8**
Կապիտալի մասնակցություն	1.2	0.0	-	0.0	-	0.0	1.2
Պարտքի արժեթղթեր	3.0	-0.0	-	-0.4	-	-0.4	2.6
Պարտատոմսեր	0.6	-0.1	-	-0.0	-	-0.2	0.4
Դրամի շուկայի գործիքներ	2.4	0.1	-	-0.3	-	-0.2	2.2
Այլ ներդրումներ	**563.0**	**12.8**	**-**	**-13.8**	**-0.0**	**-0.9**	**562.0**
Վարկեր	**201.4**	**-4.9**	**-**	**-2.0**	**-0.0**	**-6.9**	**194.5**
Երկարաժամկետ	24.5	0.7	-	-0.0	-0.0	0.6	25.1
Կարճաժամկետ	177.0	-5.6	-	-1.9	-0.0	-7.5	169.4
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	**318.8**	**11.1**	**-**	**-11.1**	**-**	**0.0**	**318.8**
Կանխիկ դրամական միջոցներ	84.3	-2.3	-	-3.3	-	-5.7	78.7
Ավանդներ	234.5	13.4	-	-7.7	-	5.7	240.1
Երկարաժամկետ	17.0	0.0	-	0.0	-	0.0	17.0
Կարճաժամկետ	217.5	13.4	-	-7.7	-	5.7	223.2
Այլ ակտիվներ	**42.7**	**6.7**	**-**	**-0.7**	**-**	**5.9**	**48.7**
Երկարաժամկետ							
Կարճաժամկետ	42.7	6.7	-	-0.7	-	5.9	48.7
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**2023.2**	**249.2**	**-2.4**	**-11.4**	**-0.6**	**234.7**	**2257.8**
Ուղղակի ներդրումներ հաշվետու երկրում	**652.6**	**13.5**	**-2.4**	**-4.7**	**-0.7**	**5.6**	**658.2**
Բաժնետիրական կապիտալ	472.4	0.1	-	-4.1	-0.1	-4.1	468.3
Վերաներդրված շահույթ	173.9	13.8	-2.4	-0.6	-0.6	10.1	184.0
Այլ կապիտալ	6.3	-0.4	-	-0.1	-	-0.4	5.9
Պորտֆելային ներդրումներ	**16.0**	**0.8**	**-**	**0.4**	**0.1**	**1.2**	**17.3**
Կապիտալի մասնակցություն	10.4	0.5	-	-0.1	0.1	0.5	10.8
Պարտքի արժեթղթեր	5.7	0.3	-	0.4	-	0.7	6.4
Պարտատոմսեր	5.7	0.3	-	0.4	-	0.7	6.4
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-	-	-	-	-
Այլ ներդրումներ	**1354.6**	**234.9**	**-**	**-7.0**	**-**	**227.9**	**1582.4**
Վարկեր	**779.7**	**101.2**	**-**	**-1.6**	**-**	**99.6**	**879.3**
Երկարաժամկետ	700.4	22.4	-	1.5	-	23.8	724.2
Կարճաժամկետ	79.3	78.9	-	-3.1	-	75.8	155.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	**556.5**	**136.1**	**-**	**-5.0**	**-**	**131.1**	**687.6**
Երկարաժամկետ	114.5	24.5	-	0.8	-	25.2	139.7
Կարճաժամկետ	442.0	111.6	-	-5.7	-	105.9	547.9
Այլ պարտավորություններ	**18.4**	**-2.4**	**-**	**-0.5**	**-**	**-2.9**	**15.5**
Երկարաժամկետ							
Կարճաժամկետ	18.4	-2.4	-	-0.5	-	-2.9	15.5
ԶՈՒՏ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ	**-1450.6**	**-236.1**	**2.4**	**-2.7**	**0.6**	**-235.8**	**-1686.3**

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԸ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	30.06.2011						30.09.2011					
	ՀՀ դրամ	Արտարժույթ					ՀՀ դրամ	Արտարժույթ				
		ԱՄՆ դոլար	Եվրո	ՌՌ ռուբլի	Այլ	Ընդամենը		ԱՄՆ դոլար	Եվրո	ՌՌ ռուբլի	Այլ	Ընդամենը
Ակտիվներ	**72.6**	**225.7**	**138.8**	**43.1**	**92.5**	**500.0**	**76.4**	**243.5**	**129.3**	**38.3**	**84.0**	**495.2**
Կապիտալի արժեթղթեր	0.9	0.2	0.0	5.5	-	5.7	0.9	0.2	0.0	5.8	-	6.0
Պարտքային արժեթղթեր	-	-	0.6	2.4	-	3.0	-	-	0.4	2.2	-	2.6
Կանխիկ դրամական միջոցներ	-	47.9	17.3	18.6	0.6	84.3	-	49.6	14.0	14.6	0.5	78.7
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	36.9	69.8	18.2	0.1	76.5	164.6	36.3	69.9	26.7	0.1	61.5	158.2
Ավանդներ	-	103.0	101.7	14.3	15.4	234.5	-	117.6	87.3	13.2	22.0	240.1
Այլ	34.8	4.8	0.9	2.2	0.0	7.9	39.1	6.2	0.9	2.3	0.1	9.5
Պարտավորություններ	**727.7**	**1107.7**	**81.8**	**24.4**	**87.8**	**1301.8**	**752.2**	**1355.6**	**62.5**	**16.3**	**77.1**	**1511.5**
Կապիտալի արժեթղթեր	656.6					-	663.2					-
Պարտքային արժեթղթեր	-	12.0	-	-	-	12.0	-	12.3	-	-	-	12.3
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	38.7	729.1	8.9	8.6	0.6	747.3	53.4	822.0	5.5	3.5	0.7	831.7
Ավանդներ	28.4	358.9	67.5	15.2	86.4	528.0	33.3	514.7	52.0	12.2	75.3	654.3
Այլ	3.9	7.7	5.4	0.5	0.9	14.5	2.2	6.7	5.0	0.6	1.0	13.3
Զուտ դիրք	**-655.1**	**-882.0**	**57.0**	**18.7**	**4.6**	**-801.8**	**-675.8**	**-1112.1**	**66.9**	**21.9**	**6.9**	**-1016.4**

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	31.03.10	30.06.10	30.09.10	31.12.10	31.03.11	30.06.11	30.09.11
Պետական կառավարման մարմիններ	**2518.4**	**2513.5**	**2686.4**	**2742.3**	**2815.5**	**2876.7**	**2939.5**
Կարճաժամկետ	-	-	-	-	0.8	0.2	0.2
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-	-	0.8	0.2	0.2
Վարկեր	-	-	-	-	-	-	-
Առևտրային վարկեր	-	-	-	-	-	-	-
Այլ պարտքային պարտավորություններ	-	-	-	-	-	-	-
Ժամկետանց պարտքեր	-	-	-	-	-	-	-
Այլ	-	-	-	-	-	-	-
Երկարաժամկետ	2518.4	2513.5	2686.4	2742.3	2814.7	2876.5	2939.3
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	-	-	0.1	0.1	0.1
Վարկեր	2518.4	2513.5	2686.4	2742.3	2814.6	2876.4	2939.3
Առևտրային վարկեր	-	-	-	-	-	-	-
Այլ պարտքային պարտավորություններ	-	-	-	-	-	-	-
Դրամավարկային կարգավորման մարմիններ	**654.4**	**650.9**	**691.6**	**699.8**	**721.3**	**716.6**	**726.1**
Կարճաժամկետ	0.3	0.4	0.3	0.4	0.3	0.5	0.6
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-	-	-	-	-
Վարկեր	-	-	-	-	-	-	-
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	0.1	0.3	0.2	0.2	0.1	0.4	0.5
Այլ պարտքային պարտավորություններ	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.1	0.1
Ժամկետանց պարտքեր	-	-	-	-	-	-	-
Այլ	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.1	0.1
Երկարաժամկետ	654.2	650.4	691.3	699.4	720.9	716.1	725.5
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	-	-	-	-	-
Վարկեր	520.5	520.2	554.3	563.8	581.3	575.1	588.0
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-	-	-	-
Այլ պարտքային պարտավորություններ	133.6	130.2	137.0	135.6	139.6	140.9	137.5
Բանկեր	**854.0**	**879.7**	**1024.4**	**1127.9**	**1229.8**	**1360.2**	**1588.8**
Կարճաժամկետ	306.2	326.9	416.8	429.5	493.2	539.4	718.5
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-	-	-	-	-
Վարկեր	27.6	44.8	63.6	73.1	66.5	79.0	155.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	271.0	271.6	334.6	338.5	413.4	442.0	547.9
Այլ պարտքային պարտավորություններ	7.6	10.5	18.5	17.9	13.3	18.4	15.5
Ժամկետանց պարտքեր	-	-	-	-	-	-	-
Այլ	7.6	10.5	18.5	17.9	13.3	18.4	15.5
Երկարաժամկետ	547.8	552.8	607.7	698.4	736.6	820.8	870.4
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	18.8	22.2	22.6	23.1	6.7	5.7	6.4
Վարկեր	443.8	441.4	496.6	581.1	627.8	700.6	724.2
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	85.1	89.3	88.4	94.2	102.2	114.5	139.7
Այլ պարտքային պարտավորություններ	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	**842.3**	**986.8**	**993.4**	**1087.7**	**1129.8**	**1161.5**	**1202.2**
Կարճաժամկետ	148.9	159.6	189.3	190.7	190.5	201.5	209.0
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-	-	-	-	-
Վարկեր	115.1	128.8	155.9	157.6	159.1	168.8	175.0
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-	-	-	-
Առևտրային վարկեր	19.9	23.0	23.7	24.7	25.5	26.4	27.4
Այլ պարտքային պարտավորություններ	13.9	7.8	9.7	8.4	6.0	6.4	6.7
Ժամկետանց պարտքեր	0.0	0.1	0.0	0.1	0.1	0.0	0.1
Այլ	13.9	7.7	9.7	8.3	5.9	6.4	6.6
Երկարաժամկետ	693.4	827.2	804.1	897.0	939.2	959.9	993.2
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	-	-	-	-	-
Վարկեր	629.0	741.9	720.3	800.9	843.7	848.7	857.0
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-	-	-	-
Առևտրային վարկեր	40.4	40.6	38.3	50.0	49.7	50.6	69.1
Այլ պարտքային պարտավորություններ	24.0	44.6	45.4	46.2	45.8	60.7	67.1
Ուղղակի ներդրումներ՝ միջֆիրմային վարկեր	**395.3**	**395.2**	**469.4**	**630.9**	**677.1**	**850.0**	**879.3**
Պարտքի պարտավորություններ մասնաճյուղ ձեռնարկությունների հանդեպ	-	-	-	-	-	-	-
Ժամկետանց պարտքեր	-	-	-	-	-	-	-
Այլ	-	-	-	-	-	-	-
Պարտքի պարտավորություններ ուղղակի ներդրողների հանդեպ	395.3	395.2	469.4	630.9	677.1	850.0	879.3
Ժամկետանց պարտքեր	-	-	-	-	-	-	-
Այլ	395.3	395.2	469.4	630.9	677.1	850.0	879.3
Համախառն արտաքին պարտք	**5264.5**	**5426.1**	**5865.2**	**6288.5**	**6573.5**	**6965.0**	**7336.0**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011											
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ	Ն
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**	**1707.5**	**1782.0**	**1875.8**	**2007.6**	**1955.1**	**1949.3**	**1887.8**
Համախառն միջազգային պահուստներ	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**	**1707.5**	**1782.0**	**1875.8**	**2007.6**	**1955.1**	**1949.3**	**1887.8**
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	33.5	34.0	31.3	31.5	27.4	20.1	16.4	19.5	16.0	15.6	11.1	5.0
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1832.3	1783.0	1758.6	1791.9	1738.0	1687.4	1765.6	1856.2	1991.5	1939.5	1938.3	1882.8

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011										
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ	Ն
Համախառն արտաքին պարտավորություններ	**699.9**	**710.5**	**714.2**	**721.7**	**734.1**	**719.5**	**716.6**	**744.4**	**748.4**	**726.1**	**753.9**	**732.2**
ԱՄՀ վարկ	487.9	495.3	497.5	502.3	509.1	497.9	495.1	523.2	525.1	510.5	514.1	498.9
ՀՓԻ տեղաբաշխում	135.6	137.6	138.5	139.6	142.7	140.9	140.9	140.9	141.7	137.5	139.7	136.5
Այլ վարկեր	75.9	77.3	77.9	79.3	81.6	80.1	80.0	79.3	80.6	77.5	99.4	96.5
Այլ պարտավորություններ	0.5	0.4	0.4	0.4	0.7	0.7	0.5	1.0	0.9	0.7	0.6	0.2


[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական արժեթղթեր	ընդամենը	կենտրոնական բանկի վերաֆինանսավորման արժեթղթերի դիմաց իրացված պետական արժեթղթեր	կենտրոնական բանկի վերաֆինանսավորման իրացված այլ արժեթղթեր	ՕԻԳ-երի միջոցների դրամով	ՕԻԳ-երի միջոցներ իրացված պետական արժեթղթերի դիմաց	ընդամենը	
2010								
Դեկտեմբեր	12124	12124	106544	672	1	515	107733	**-95609**
2011								
Հունվար	12236	12236	135069	3168	1	515	138753	**-126517**
Փետրվար	13101	13101	112661	3238	1	521	116421	**-103320**
Մարտ	13608	13608	101877	3334	1	524	105736	**-92128**
Ապրիլ	15806	15806	99035	3458	2	525	103020	**-87214**
Մայիս	16719	16719	90922	3434	1	534	94891	**-78172**
Հունիս	14713	14713	94477	3377	1	523	97856	**-83143**
Հուլիս	14904	14904	111939	4208	1	515	116665	**-101761**
Օգոստոս	13843	13843	109139	4296	8	521	113964	**-100121**
Սեպտեմբեր	15863	15863	111984	3752	1	528	116266	**-100402**
Հոկտեմբեր	15115	15115	102635	3804	1	538	106978	**-91863**
Նոյեմբեր	15219	15219	93739	3451	1	541	97733	**-82514**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Հրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազայի վրա [5]	Դրամային բազմապատկիչ [6]
2010										
